



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 11 ՄԱՅԻՍ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐՄԱՆ

Մեծ ու զարմանալի են Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,

Արդար ու ճշմարիտ են ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:

Բոլոր ազգերը պիտի գան Քո առջեւ ու Քեզ պիտի երկրպագեն,

Քանի որ իրաւունքներդ յայտնուեցին Բոլոր ազգերին, Ո՛վ Թագաւոր:

ԱՂՈԹՔ

Տէր Աստուած մեր, կը փառաւորենք Քու սուրբ անունդ, Քու սրեղծագործութեանդ մեծութեան եւ գեղեցկութեան համար: Դուն երկինքը զարդարեցիր փառքով ու վայելչութեամբ, եւ երկիրը լեցուցիր Քու բարիքներովդ: Լեռները, ծովերը, ծառերը ու բոլոր արարածները Քու փառքդ կը հռչակեն: Շնորհակալութիւն Քեզի, որ ամէն օր կը հոգաս մեր կարիքներուն համար: Երախտապարտ սիրտ շնորհէ, Տէր, որ-պէսզի միշտ Քեզմով ուրախանանք, եւ փառք փանք Քու գործերուդ ու հայրական հոգաւարութեանդ համար: Նորոգէ մեր հոգիները, ով Տէր, ինչպէս կը նորոգես երկրի երեսը: Թող մեր խօսքերը եւ մեր կեանքը հաճելի ըլլան Քեզի, ու մեր անձերը միշտ օրհնեն Քեզ, յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս. ամէն:

ՇԱՐՄԱՆ - ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել գնեց ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեացուց: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուած-ձայնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ր եւ ողորմեա:

ՇԱՐՄԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղեղոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՍԱՂՍՈՍ 104

ՆԵՐՔՈՂ ԱՐԱՐԻՉԻՆ

Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս:

Տէր, իմ Աստուածս, անչափօրէն մեծ ես դուն,
փառֆով ու մեծավայելչութեամբ զգեստաւորուած:

Լոյս հագեր ես վերարկուի պէս, երկինքը տարածեր ես վրանի պէս:
Երկնային ջուրերէն վեր շիներ ես քու բարձրադիր պալատդ,
ամպերը իբրեւ կառք կը գործածես, եւ հովերու թեւերուն վրայ կը
ֆալես:

Դուն հրեշտակները հոգի ստեղծեցիր, ֆեզի ծառայողները՝ բոցավառ
կրակ:

Երկրագունդը իր ծիրին վրայ հաստատեցիր,
որպէսզի անկէ չշեղի բնաւ:

Զգեստի փոխարէն՝ ովկիանոսներով ծածկեցիր գայն,
եւ լեռները ջուրերուն տակ մնացին,

ապա զօրեղապէս հրամայեցիր, եւ ջուրերը նահանջեցին,
քու ձայնիդ որոտումէն փախուստի դիմեցին,

լեռներն ի վեր բարձրացան, հովիտներու խորը իջան,
եւ իրենց համար քու որոշած տեղերուդ մէջ ամփոփուեցան:

Դուն անոնց սահման դրիր, որպէսզի անդին չանցնին,
եւ անգամ մըն ալ երկիրը չողողեն:

Դուն ձորերուն մէջ աղբիւրներ կը բղխեցնես,
լեռներուն մէջէն վտակներ կը հոսեցնես,

որոնք խմելու ջուր կը հայթայթեն բոլոր վայրի գազաններուն,
եւ որոնցմով իրենց ծարաւը կը յագեցնեն վայրի էշերը:

Այդ վտակներուն մօտիկ բոյն կը դնեն երկինքի թռչունները,
եւ իրարու ձայն կու տան սաղարթախիտ ոստերուն մէջէն:

Քու երկնային բնակարանէդ կ'ոռոգես լեռները,
եւ պարգեւած պտուղներովդ կը կշտացնես աշխարհը:

Անասուններուն համար խոտ կը բուսցնես,
եւ կ'անեցնես տունկերը, որ մարդը կը մշակէ,

որպէսզի հողը կերակուր պարգեւէ,
գինի՝ որ մարդու սիրտը կ'ուրախացնէ,

ձիթախիլ՝ որ անոր դէմքը կը փայլեցնէ,
եւ ուտելիք՝ որ մարդս կը զօրացնէ:

Դուն ինքդ կ'ոռոգես ծառերդ, ով Տէր,
Լիբանանի մայրիները՝ որ դուն ինքդ տնկեցիր:

Ճննդուկները բոյն կը դնեն անոնց մէջ,
արագիլը բոյն կը շինէ անոնց կատարին:

Բարձրադիր լեռները ապաստանարանն են այծեամներուն,
ապառաժները՝ նագարներուն:



ՆԵՐՔՈՂ ԱՐԱՐԻՉԻՆ - Մաս Ա

103-րդ Սաղմոսին նման, այս Սաղմոսն ալ կը սկսի օրհնաբանութեամբ: Յիշեցնելու իր իսկ անձին, ըսելով, ”օրհնաբանէ Տէրը, ով ին անձս”: 103-րդ Սաղմոսը օրհնաբանութիւն էր Տիրոջ, Անոր փուսած բարիքներուն համար; Աստուած է մարդ կապին: Այս պարագային, զԱստուած ներկայացնելու որպէս սրբօրհն, արարիչը այս փեղեկերէն: Պարկերաւոր ձեւով կը ներկայացնէ, աւելի դիւ-րամապչելի է ըմբռնելի դարձնելու համար միտքը: Սաղմոսերգուն սրեղծագործութիւնը կը ներկայացնէ ոչ պարզապէս արտադրութիւն մը, այլ որպէս փառքը, մեծավայելչութիւնը Աստուծոյ: Այնպէս ինչպէս արուեստագէտի պարագային, երբ արուեստի գործը մը կ’ուզէ ներկայացնել, ոչ որ-պէս աշխատանք մը, այլ ամբողջ իր ներաշխարհը պարկերացնող, դրսեւորող: Նոյնպէս ալ սրեղծագործութեան պարագային, այնպէս ինչպէս կը կարդանք 19-րդ Սաղմոսին մէջ, երկինքն ու երկի-րը Աստուծոյ փառքը կը պատմեն: Հեղափոխականօրէն, այս Սաղմոսը կը սկսի ու կ’աւարտի նոյն արտայայտութեամբ, ”օրհնաբանէ Տէրը, ով ին անձս”: Միջանկեալ բաժինը, պատճառն է այդ օրհ-նաբանութեան: Ինչո՞ր օրհնաբանել: Իր սէրը հանդէպ մարդկութեան: Սրեղծագործութիւնը ոգե-ղէն էականներուն է ամբողջ երեւելի աշխարհին: Իր հոգածութիւնը հանդէպ այդ սրեղծագործու-թեան, ոչ այնպէս մը, որ սրեղծած է հեռու, ալ չի խառնուիր, այլ ընդհակառակը Անոր հոգածու-թիւնը, հոգաբարութիւնը, է Իր բարիքներովը լեցնելու աշխարհը: Սակայն, այս բոլորին դիմաց, մարդուն անկումը, անոր մեղանջումը, բայց է այնպէս Աստուած անարարքեր չեղաւ, այլ իր Հոգին դրկելով վերանորոգելու աշխարհը: Չի կարելի փոք չտալ Աստուծոյ երբ ամէն փառք Իրեն է վայել, մանաւանդ երբ փառքով է զգեստաւորուած: Այդ փառքին նախաճաշակը Քրիստոս ցոյց փուսաւ Իր աշակե-րպնէրուն Թափօր լեռան վրայ: պարկերաւոր ձեւով նաեւ կը ներկայացնէ Աստուծոյ ամե-նութեք ըլլալու հանգամանքը: Ոչ այնպէս ինչպէս հեթանոսները կը հաւատային, որպէս իրենց պաշ-տած աստուածները անշարժ մէկ տեղի մէջ: Ոչ ալ միւս փարբերակը ամէն ինչին մէջ Աստուծոյ ներ-կայութիւնը, որ կը կոչուի Pantheism, այլ Աստուծոյ ներկայութիւնը ամենութեք, է սակայն ոչ մէկ բանի մէջ սահմանափակուած: Ապա կը ներկայացնէ թէ ինչպէս Աստուած սրեղծեց ոգեղէն էակ-ները, հրեշտակները, է ինչ բանի համար, որպէս Իրեն ծառայող բոցեղէն կրակ: Որքան ալ կը ներ-կայացնէ սրեղծագործութեան յառաջ գալը, բայց ոչ որպէս ինչպէ՛ս, այլ որպէս ինչո՞ւ: Որովհետեւ յաճախ կը փորձենք գիտական հարցումներով հակասութիւններ գտնել Աստուածաշունչին մէջ: Սակայն, Աստուածաշունչը յարակօրէն ցոյց կու տայ նպատակը այդ բոլորին: Այն ինչ Ծննդոց գիրքի առաջին գլուխը կը ներկայացնէ մեզի սրեղծագործութեան պարմութիւնը, այստեղ աւելի պարկերաւոր ձեւով ներկայացնելու: Ահա 10-րդ համարէն սկսեալ կը ներկայացնէ Աստուծոյ նախախնամութիւնն ու հոգաբարութիւնը բոլոր արարածներուն նկատմամբ, ոչ միայն մարդուն, այլ նաեւ վայրի գազաններուն, երկնքի թռչուններուն: Ահա կարգը կը հասնի մարդուն, ուր մարդուն պարտականութիւնը հողը մշակելու իրեն կերակուր պարգեւելու, այս պարագային կերակուրը հաց արտայայտութեամբ, յետոյ գինի՝ մարդու սիրտը ուրախացնելու, յետոյ ձիթաբալ՝ անոր դէմքը փայլեցնելու: Սակայն, եկեք այս նիւթական փուտալներուն մէջ հոգեւորը տեսնելու, հացին ու գինիին մէջ Քրիստոսի մարմինն ու արիւնը տեսնելու, իսկ ձիթաբալին մէջ Սուրբ հոգին ներկայ-յութիւնը, ուր պիտի փայլեցնէ մարդու դէմքը Իր շնորհներով: Հեղափոխականօրէն, 16-րդ հա-մարը կը խօսի Աստուծոյ ծառերուն մասին, որպէս Քու ծառերդ, չհաշուած բոլոր սրեղծագործու-թիւնը Աստուծոյ կը պարկեանի: Բայց այստեղ ըսելիքը այն է, որ նոյնիսկ լեռներու գագաթներուն ուր մարդը չապրիր, բայց այնտեղ ծառեր կան, է այնպիսի ծառեր որոնք նշանաւոր են, Լիբանանի մայրիները, որոնք դարձեալ Աստուած է որ կ’ոռոգէ: Իրաքանչիւրին համար իրեն հարմար տեղ մը: Ահա թէ ինչու պէտք է օրհնաբանել Տէրը, Իր բոլոր բարիքներուն համար: